TELCELL

ԱՄՓՈՓԱԳԻՐ

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ

ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ № 030625 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ

ՀՀ, ք. Երևան **06 հունիսի 2025թ.**

Ժողովի տեսակը՝ տարեկան

Ընդհանուր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը և ժամը.
2025 թվականի հունիսի 03
Ժամը՝ 15:00-ից մինչև 16:30

Արձանագրության կազմման և ստորագրման ամսաթիվ՝ 2025 թվականի հունիսի 06
Արձանագրությունը կազմվել է հայերեն և ռուսերեն լեզուներով, 2 օրինակից և բաղկացած է 6 էջից:

Ընդհանուր ժողովի գումարման վայրը.

ՀՀ, ք. Երևան, Իսակովի 11 («FOODPARK BY DOWNTOWN»),

ֆիզիկապես չներկայացած բաժնետերերն ընդհանուր ժողովին մասնակցել են առցանց եղանակով՝ իրական ժամանակի ռեժիմում:

Համաձայն Ընկերության Հաշվիչ հանձնաժողովի 04.06.2025թ.-ի արձանագրության.

Տեղաբաշխված և քվեարկող բաժնետոմսերի ընդհանուր քանակը կազմում է 34 650 000 հատ բաժնետոմս:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝

Ընդհանուր ժողովի քվեարկությանը մասնակցած, ինչպես նաև Ընդհանուր ժողովին ֆիզիկապես ներկա բաժնետերերի գրանցման ավարտի պահին գրանցված բաժնետերերը համատեղ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված 32 538 225 հատ քվեարկող բաժնետոմսերի կամ ընդհանուր քվեարկող բաժնետոմսերով տրամադվող ձայների 93,9%-ին:

Բաժնետերերի 2025 թվականի հունիսի 3-ի տարեկան ընդհանուր ժողովի քվորումն ապահովված էր:

Ժողովի նախագահ՝
Արտյոմ Ղազարյանը,
Ժողովի քարտուղար՝
Լյուդմիլա Ղազարյանը,

ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳԸ

Հարց 1. «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի 2024 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին
Հարց 2. «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի արտաքին աուդիտի կողմից հաստատված 2024թ. ֆինանսական հաշվետվությունները հաստատելու մասին
Հարց 3. «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի 2025 թվականի աուդիտն իրականացնող անձին հաստատելու մասին
Հարց 4. 2024թ. տարեկան շահույթը բաշխելու մասին, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունման և տարեկան շահութաբաժինների չափի հաստատման մասին
Հարց 5. 40,000,000 ՀՀ դրամի չափով գովազդային վիճակախաղի տարեկան շահումային հիմնադրամ ստեղծելու մասին
Հարց 6. Կանոնադրության նոր խմբագրությունը հաստատելու մասին

ԱՌԱՋԻՆ ՀԱՐՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԼՍԵՑԻՆ.
Արտյոմ Ղազարյանին, ով հակիրճ ներկայացրեց «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի 2024 թվականի տարեկան հաշվետվությունը:

Քվեարկության արդյունքները.

Կողմ՝ 32465332 բաժնետոմս (99,77598%)
Դեմ՝ 11 բաժնետոմս (0,00003%)
Ձեռնպահ՝ 287 բաժնետոմս (0,00088%)

Ընդունվեց 1-ին հարցի կապակցությամբ հետևյալ որոշումը.

Հաստատել «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի 2024 թվականի տարեկան հաշվետվությունը:

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԼՍԵՑԻՆ.

Արտյոմ Ղազարյանին, ով հակիրճ ներկայացրեց Ընկերության արտաքին աուդիտորի («ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» ՓԲԸ) եզրակացությամբ 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության համախմբված ֆինանսական հաշվետվությունները:

Քվեարկության արդյունքները.

Կողմ՝ 32465093 բաժնետոմս (99,775%)
Դեմ՝ 0 բաժնետոմս (0 %)
Ձեռնպահ՝ 537 բաժնետոմս (0,002%)

Ընդունվեց 2-րդ հարցի կապակցությամբ հետևյալ որոշումը.

Հաստատել արտաքին աուդիտի եզրակացությամբ Ընկերության 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտվող ֆինանսական տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունները:

ԵՐՐՈՐԴ ՀԱՐՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԼՍԵՑԻՆ.

Արտյոմ Ղազարյանին, ով ներկայացրեց առաջարկվող թեկնածուին:

Քվեարկության արդյունքները.

Կողմ՝ 32463396 բաժնետոմս (99,770%)
Դեմ՝ 1715 բաժնետոմս (0,005%)
Ձեռնպահ՝ 519 բաժնետոմս (0,002%)

Ընդունվեց 3-րդ հարցի կապակցությամբ հետևյալ որոշումը.

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի 2025 թվականի աուդիտն իրականացնող անձ հաստատել «ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» ՓԲԸ-ին:

ՉՈՐՐՈՐԴ ՀԱՐՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԼՍԵՑԻՆ.

Արտյոմ Ղազարյանին, ով ներկայացրեց Ընկերության 2024 թվականի գործունեության արդյունքում ձևավորված շահույթի բաշխման հարցը:

Քվեարկության արդյունքները.

Կողմ՝ 32464371 բաժնետոմս (99,773%)
Դեմ՝ 1000 բաժնետոմս (0,003%)
Ձեռնպահ՝ 259 բաժնետոմս (0,001%)

Ընդունվեց 4-րդ հարցի կապակցությամբ հետևյալ որոշումը.

1. **«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ Խորհուրդը, հաշվի առնելով 2024 թվականի տարեկան ֆինանսական գործունեության արդյունքները, «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ բաժնետերերի ընդհանուր ժողովին առաջարկում է «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ 31.12.2024 թվականի դրությամբ տարեկան ֆինանսական հաշվետվություններում արտացոլված 1 596 642 000 (մեկ միլիարդ հինգ հարյուր ինսունվեց միլիոն վեց հարյուր քառասուներկու հազար) ՀՀ դրամի չափով տարեկան զուտ շահույթից վճարել ընդհանուր 1,250,000,000 (մեկ միլիարդ երկու հարյուր հիսուն**

միլիոն) ՀՀ դրամ՝ որպես տարեկան շահութաբաժիններ, այն է՝ յուրաքանչյուր 1 բաժնետոմսի դիմաց՝ 36 (երեսունվեց) ՀՀ դրամ:

2. Տարեկան շահութաբաժինների վճարումները կատարել առավելագույնը մինչև 01/07/2025թ.-ը ներառյալ, դրամական միանվագ փոխանցմամբ, «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա՝ 2025 թվականի ապրիլի 30-ի օրվա վերջի դրությամբ Ընկերության մասնակիցների ռեեստրում ընդգրկված բաժնետերերին՝ կանոնադրական կապիտալում ունեցած մասնակցությանը համամասնորեն:
3. Շահութաբաժինները վճարելուց հետո մնացած շահույթը թողնել չբաշխված:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՐՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԼՍԵՑԻՆ.

Արտյոմ Ղազարյանին, ով ներկայացրեց գովազդային վիճակախաղերի կարևորությունը և այլ հիմնավորումներ:

Քվեարկության արդյունքները.

Կողմ՝ 32464973 բաժնետոմս (99,7749%)
Դեմ՝ 38 բաժնետոմս (0,0001%)
Ձեռնպահ՝ 619 բաժնետոմս (0,0019%

Ընդունվեց 5-րդ հարցի կապակցությամբ հետևյալ որոշումը.

Ստեղծել գովազդային վիճակախաղի տարեկան շահումային հիմնադրամ 40,000,000 ՀՀ դրամի չափով, որի օգտագործման կարգը որոշվում է Խորհրդի կողմից:

ՎԵՑԵՐՈՐԴ ՀԱՐՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԼՍԵՑԻՆ.

Արտյոմ Ղազարյանին, ով ներկայացրեց Կանոնադրության նոր խմբագրությունը:

Քվեարկության արդյունքները.

Կողմ՝ 32463903 բաժնետոմս (99,772%)
Դեմ՝ 1000 բաժնետոմս (0,003%)
Ձեռնպահ՝ 727 բաժնետոմս (0,002%)

Ընդունվեց 5-րդ հարցի կապակցությամբ հետևյալ որոշումը.

Հաստատել Ընկերության կանոնադրության նոր խմբագրությունը:

Ժողովի արձանագրությունը ստորագրել են՝
Ժողովի նախագահ Արտյոմ Ղազարյանը,
Ժողովի քարտուղար Լյուդմիլա Ղազարյանը:

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ՝ ԱՐՏՅՈՄ ՂԱԶԱՐՅԱՆ

«ԹԵԼ-ՍԵԼ»
"ТЕЛ-СЕЛЛ"
"TEL-CELL"
02703102